# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077683222

N- 16

« 12 » փետրվարի 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 12-ի թիվ 1 հերթական նիստի որոշումները:

Առդիր 12 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

# ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի փետրվարի « 12 » N 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 12 -ի N 1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
2. ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
3. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՅԱՆ
5. ՇԱՀԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի փետրվարի « 12 »
գ. Հայկաշեն

Հավանված

Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի
ավագանու 12.02.2020թ. N-1 որոշմամբ

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվական փետրվարի 12-ի N 1 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի 2020 թվականին գումարվելիք ավագանու հերթական նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

4. Համայնքի աղբահանության պայմանագիրը և աղբի տեղափոխման սխեման հաստատելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

5. Էջմիածնի ավտոդպրոց հաճախող զորակոչիկների ճանապարհածախսի փոխհատուցման մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

# ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի փետրվարի «12» N 02

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՒՄԱՐՎԵԼԻՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երրորդ մասով՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի 2020 թվականի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր:
3. Ավագանու ընդունած որոշումները 7-օրյա ժամկետում ներկայացնել մարզպետարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ՇԱՀԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
2. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
3. ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
5. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի փետրվարի «12»

գ. Հայկաշեն

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Հայկաշեն համայնքի
2020թ փետրվարի 12-ի ավագանու
թիվ 1 հերթական նիստի N- 2 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՒՄԱՐՎԵԼԻՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. փետրվարի 12
2. ապրիլի 13
3. հունիսի 15
4. օգոստոսի 11
5. հոկտեմբերի 12
6. դեկտեմբերի 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

# ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի փետրվարի «12» N 3 -Ն

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը `համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ`

1. ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
3. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
5. ՇԱՀԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. փետրվարի «12»
գ. Հայկաշեն

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի
N 03-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ՀԱՅԿԱՇԵՆԻ գյուղական համայնքի 2019թ. վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 8130.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 8097.128 հազար դրամ կամ կատարվել է 99.6 %-ով, այդ թվում

1,Հողի հարկի պլանով նախատեսված 5900.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 2541.0 հազար դրամ կամ կատարվել է 43.1 %-ով:

2, 1,Գույքահարկի պլանով նախատեսված 2230.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 5556.128 հազար դրամ կամ կատարվել է 249.1 %-ով:

**2.** ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 277.5 հազար դրամ կամ կատարվել է 277.5 %-ով, այդ թվում

1. Տեղական տուրքերի գծով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 277.5 հազար դրամ կամ կատարվել է 277.5 %-ով, այդ թվում՝ համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի

ԾԱԽՍԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

1.ՀԱՅԿԱՇԵՆԻ գյուղական համայնքի 2019թ. բյուջեի 01 խմբի ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 21501.8 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 20229.662 հազար դրամ կամ կատարվել է 94,1 %-ով:

1) տեղական ինքնակառավարում ՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 19521.8 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 18307.199 հազար դրամ կամ կատարվել է 93,8 %-ով:

2 ) Համայնքային այլ ծախսեր՝ 01բաժին 06 խումբ 01դասով նախատեսված 1980.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1922,462 հազար դրամ կամ կատարվել է 97,1 %-ով:

2.Շրջակա միջավայրի պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 05բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 1320.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1320.0 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

3.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08բաժնով նախատեսված 4003.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 3619,926 հազար դրամ կամ կատարվել է 90,4 %-ով:

4. 09.01.01 ծախսային ծրագրով նախադպրոցական կրթություն ծրագրով նախատեսված 3000,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2858,72 հազար դրամ կամ կատարվել է 95,3 %-ով:

5. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 10բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 3150,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 3150,0 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 277.5 հազար դրամ կամ կատարվել է 277.5 %-ով:

3. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 677.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 170.7 հազար դրամ կամ կատարվել է 25.2 %-ով, այդ թվում՝

3.1. գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 77.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 77.0 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

3.2 Տեղական վճարների մասով նախատեսված 600.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 93.7 հազար դրամ կամ կատարվել է 15.6 %-ով:

4. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) նախատեսված 23092.8 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 23092.8 հազար դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

**ՀԱՅԿԱՇԵՆԻ գյուղական համայնքի 2019թ. վարչական բյուջեով նախատեսված 31999.8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 31638.165 հազար դրամ կամ կատարվել է 98.9 %-ով:**

ՀԱՅԿԱՇԵՆԻ գյուղական համայնքի 2019թ. բյուջեն սեփական եկամուտների գծով նախատեսված 8130.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 8097.128 հազար դրամ կամ կատարվել է 99.6 %-ով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

Հայկաշենի գյուղական համայնքի 2019թ բյուջեով՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե նախատեսում չի եղել:

2019թ. բյուջեի վարչական բյուջեով նախատեսված 31999,8 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 30214,845 հազար դրամ կամ կատարվել է 94,4 %-ով:

Բյուջեի տարեվերջի ազատ մնացորդը 1423,32 հազար դրամ:

## ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ

Հայկաշենի գյուղական համայնքի բյուջեի տարեվերջի պակասորդ (դիֆիցիտ) չունենք:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

## ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի փետրվարի « 12 » N 4

## ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20 կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի աղբահանության տեղադրման սխեման՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել գյուղապետարանի և Ա/Ձ Լևոն Օհանյանի միջև կնքված երկկողմ պայմանագիրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ՇԱՀԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
2. ԱՆԴՐԻԱՍ ՄԵՐՈՔՅԱՆ
3. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
5. ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի փետրվարի «12»
գ. Հայկաշեն

Հավելված
Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի
ավագանու 12.02.2020թ N 4 որոշման

ՍԽԵՄԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Հայկաշեն համայնքում առկա է 372 տնտեսություն, բնակչության թիվը 1400, աղբահանվող փողոցների թիվը 18, երկարությունը 12 կմ:
2. Համայնքում առաջացող կենցաղային աղբի ծավալը կազմում է տարեկան մոտավորապես 530խոր / մ :
3. Սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 60 հա:
4. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվում է համայնքի ամբողջ տարածքում ամիսը 4 անգամ հաճախականությամբ Ա/Ձ Լևոն Օհանյանի կողմից գնման պայմանագրի համաձայն:
5. Աղբահանության համար դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 33-Ն որոշմամբ:
 1) Համայնքի բնակիչներից աղբահանության համար մատուցված ծառայությունների դիմաց մեկ շնչի հաշվով ամսական վճար սահմանվել է 50 դրամ:
6. Համայնքի տարածքից աղբի հավաքման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման, վնասազերծման և պահման ինչպես նաև աղբը տեղափոխող մեքենա- մեխանիզմների աշխատանքները համակարգվում է Ա/Ձ Լևոն Օհանյանի կողմից:
7. Համայնքի վարչական տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից երկկողմ կնքված պայմանագրին համաձայն:
8. Համայնքի բյուջեի եկամտային մասում 2020 թվականի համար նախատեսված է հավաքագրել 600.0 հազար դրամ աղբահանության վճար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077563222

## ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի փետրվարի « 12 » N 5

## ԷՋՄԻԱԾՆԻ ԱՎՏՈԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով «Էջմիածնի ավտոդպրոց» ՍՊԸ-ի տնօրենի 2020թվականի հունվարի 13-ի N 2 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ցուցաբերել դրամական օգնություն զորակոչիկ Արամայիս Արմենի Սարգսյանին 30.0 հազար /երեսուն հազար/ դրամ՝ ավտոդպրոց հաճախելու ճանապարհածախսի համար։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
3. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
5. ՇԱՀԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՍԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի փետրվարի « 12 »

գ. Հայկաշեն